ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Ներքին Ծաղկավան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, գ.Ծաղկավան, ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ՕԳՈՍՏՈՍԻ 2020թվականի N 36-Ա

ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի պահանջներով համայնքի ավագանին

Որոշում է՝

Հաստատել նստի հետևյալ օրակարգը

1. Ն.Ծաղկավան համայնքի վարչական սահմաններում գտնվող գյուղատնտեսական նշանակության 3,64հա վարելահողից /ծածկագիր 11-037-0217-001-002/առանձնացված հողակտորը 0,30809հա և բնակելի կառուցապատման ծածկագիր 11-037-0003-0001 0,06570հա հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու և պետական գրանցում ստանալու մասին:

2. Ն.Ծաղկավան համայնքի 2020թ. տեղական բյուջեում փոփոխություն կատարելու մասին:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՍԻՐՅԱՆ ԷԴԳԱՐ

ԱՍԻՐՅԱՆ ՄՀԵՐ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԱՐԶՊԵՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԻՍԿԱՆԴԱՐ ՄԵՀՐԱԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Ներքին Ծաղկավան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, գ.Ծաղկավան, ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ՕԳՈՍՏՈՍԻ 2020թվականի N 37-Ա

Ն.ԾԱՂԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 3,64ՀԱ ՎԱՐԵԼԱՀՈՂԻՑ /ԾԱԾԿԱԳԻՐ 11-037-0217-001-002/ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱԿՏՈՐԸ 0,30809ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ /ԾԱԾԿԱԳԻՐ 11-037-0003-0001 0,06570ՀԱ/ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ կառավարության 06.10.2005թ.թիվ 2125-Ն որոշմամբ Ն.Ծաղկավան համայնքի վարչական սահմաններում գտնվող /ծածկագիր 11-037-0217-001-002 3,64հա/ գյուղատնտեսական նշանակության վարելահողից 0,30809հա, և բնակելի կառուցապատման /ծածկագիր 11-037-0003-0001 0,06570հա/ հողամասերը սխալմամբ չի փոխանցվել որպես համայնքային սեփականություն, այլ արտացոլվել է որպես քաղաքացու սեփականություն առանց օտարման պայմանագրի:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով համայնքի ավագանին

Որոշում է՝

1. ՀՀ Տավուշի մարզի Ն.Ծաղկավան համայնքի վարչական սահմաններում գտնվող /ծածկագիր 11-037-0217-001-002 3,64հա/ գյուղատնտեսական նշանակության վարելահողից 0,30809հա, առանձնացված հողակտորը և բնակելի կառուցապատման /ծածկագիր 11-037-0003-0001 0,06570հա/ հողամասը ճանաչել որպես համայնքային սեփականություն և դիմել ՀՀ կառավարության առընթեր նշած գույքի կադաստրային պետական կոմիտեի Երևանի տարածքային ստորաբաժանմանը տվյալ հողամասերը պետական գրանցում ստանալու նպատակով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՍԻՐՅԱՆ ԷԴԳԱՐ

ԱՍԻՐՅԱՆ ՄՀԵՐ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԱՐԶՊԵՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԻՍԿԱՆԴԱՐ ՄԵՀՐԱԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Ներքին Ծաղկավան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, գ.Ծաղկավան, ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ՕԳՈՍՏՈՍԻ 2020թվականի N 38-Ն

Ն.ԾԱՂԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020Թ. ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարը նշեց, որ <<Ջաղացի ձոր>> աղբյուրի աշխատանքները ըստ նախնական պայմանավորվածության թաղամասի բնակիչները կատարում են իրենց ուժերով և համայնքապետարանի օգնությամբ: Համայնքապետարանը իր մեծ մասնակցությունը պետք է ունենա այդ աշխատանքներին՝ թէ ֆիզիկապես թէ ֆինանսապես, ուստի համայնքի ղեկավարը առաջարկեց վերը նշված աշխատանքների համար հատկացնել 360000 ՀՀ դրամ: Համայնքի ղեկավարը միաժամանակ նշեց, որ համայնքում առկա մատուռի տարածքը ունի բարեկարգման կարիք՝ մասնավորապես պետք է բարեկարգել ցանկապատը և բակը, որի համար համայնքի ղեկավարը առաջարկեց
բյուջեից տրամադրել 350000 ՀՀ դրամ :

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով և 18-րդ հոդվածի 5-րդ ենթակետով համայնքի ավագանին

Որոշում է՝

1. <<Ջաղացի ձոր>> աղբյուրի կառուցման համար համայնքի կողմից որպես ներդրում հատկացնել 360,0 հազար ՀՀ դրամ, որից <<համայնքների պահուստային ֆոնդ 01-02-051 հատվածի 4891 հոդվածից համայնքային զարգացում 02-01-55 հատվածի 4241 հոդվածին 300,0 հազար ՀՀ դրամ աշխատանքների կատարման համար, համայնքի ֆոնդային բյուջեից համայնքի զարգացում 02-01-55 հատվածի 5221 հոդված տեղափոխել 60,0 հազար ՀՀ դրամ նյութեր ձեռք բերելու:

2.Մատուռի բարեկարգման աշխատանքների համար Ն.Ծաղկավան համայնքի 01-01-03 հատվածի 4251 հոդվածից 200,0 հազար ՀՀ դրամ նյութերի ձեռք բերման, 4241 հոդվածից 150,0 հազար ՀՀ դրամ

աշխատանքների կատարման համար /ներառյալ հարկային պարտավորությունները/:

3. Ն.Ծաղկավան համայնքի 01-01-03 հատվածի 4251 հոդվածից 4234 հոդված ուղղել 30,0 հազար ՀՀ դրամ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող 10-րդ օրվանից:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՍԻՐՅԱՆ ԷԴԳԱՐ

ԱՍԻՐՅԱՆ ՄՀԵՐ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԱՐԶՊԵՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԻՍԿԱՆԴԱՐ ՄԵՀՐԱԲՅԱՆ